# ՁԵՌԱԳՐԱՑՈՒՆ ՍՐԲՈՑ ՅԱԿՈԲԵԱՆՑ ՎԱՆՈՒՑ

**(Նոր ստացուած գրչագիր մատեաններ)**
**Ձեռագրաց Ցուցակ Սրբոց Յակոբեանց,**
**թիւ 3891**

## ՀԱՄԱՅԻԼ - 2




*Տեղի*՝ չիք
*Թուական*՝ չիք. ուշ շրջանի գրչութիւն է, հաւանաբար ԺԹ. դար

## ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ

*Ծաւալ*՝ 15x256: 8x256:
*Հանգամանք*՝ լաւ. վերին և ստորին մասերը կը պակսին:
*Նիւթ*՝ թուղթ:
*Գրիչ*՝ անյայտ:
*Գրութիւն*՝ խորագիրները և սկզբնատողերը կարմիր թանաքով, մնացեալը սեւ մելանով: Ուշ շրջանի յատուկ նօտր և բոլորգրի խառնուրդ: Սակաւաթիւ համառօտագրութիւնք: Պարբերութեանց սկզբնատառերը՝ մեծադիր և դեղնագոյն: Նկարները բնագրէն անջատող հաստ կարմիր գիծեր: Նկարներուն ուրուագծերը մելանով կատարուած են իսկ մնացեալ մասերը՝ ընդհանրապէս ճնշումի միջոցաւ:
*Ստացող*՝ Խանում:
*Նկարներ*՝ վերուստ ի վայր ըստ կարգի.

ա. Ս. Ստեփանոս՝ շրջանակի մէջ

բ. Ս. Գրիգոր Լուսաւորիչ՝ եպիսկոպոսական զգեստով

գ. Հրեշտակապետ մը՝ քառանկիւն շրջանակի մէջ

դ. Իսահակի զոհաբերութիւնը

ե. քառաթեւ փոքրիկ խաչեր՝ 21 շարք, որոնց միջեւ շեղակի ուղղութեամբ աղօթք

զ. Ս. Գէորգ՝ քառանկիւն շրջանակի մէջ

է. Ս. Սարգիս և որդին Մարտիրոս՝ քառանկիւն շրջանակի մէջ:

*Յիշատակարաններ*՝ չիք:

*Յետնագոյն յիշատակարան*՝ «Դաւիթ սրբազան (Սահակեան) յանձնեց մեզի 1991 Նոյեմբեր 25-ին. Տեսուչ Ձեռագրատան՝ Նորայր Արք. Պ(ողարեան)»:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ա. Աղօթք Սրբոյն Յովհաննու ... և փրկեա(յ) Տ(է)ր Ա(ստուա)ծ զծառայն քո Խանումն. օգնական և պահապան եղիցի. ամէն:

Բ. Աղօթք սրբոյն Ստեփաննոսի ... և փրկեա(յ) Տ(է)ր Ա(ստուա)ծ զծառայն քո Խանումն. օգնական և պահապան եղիցի. ամէն:

Գ. Աղօթք սրբոյն Լուսաւորչին ... և փրկեա(յ) Տ(է)ր Ա(ստուա)ծ զծառայն քո Խանումն. օգնական և պահապան եղիցի (յ)ամ(ենայն) չարէ պահեսցէ. ամէն:

Դ. Աղօթք պահպանութեան ի սրէ, ի թրէ ի դանակէ ... ի դիմաց զծառային Ա(ստուծո)յ Խանումին: Օգնական և պահապան եղիցի. ամէն:

Ե. Աղօթք վաճառի տալէիի և սթարի ... բանամք զդուռն ողորմութեան և վաճառի տալէիի և սթարի ... պատուօք ծառային իմոյ Խանումին. օգնական և պահապան եղիցի. ամէն:

Զ. Աղօթք ս(ուր)բ հօրն Աբրահամու ... պահեայ զծ(ա)ռ(ա)յն քո Խանումն:

Է. Աղօթք սրբոյն Գէորգեայ զօրավարին ... փրկեա(յ) Տ(է)ր Ա(ստուա)ծ զծառայն քո Խանումն: Օգնական և պահապան եղիցի. ամէն:

Ը. Աղօթք պահպանութեան ... փրկեա(յ) Տ(է)ր Ա(ստուա)ծ զծառայն քո Խանումն: Օգնական և պահապան եղիցի. ամէն:

Թ. Աղօթք զաւակ ծնելոյ ... և տուր զաւակ ծառային քո Խանումին. օգնական և պահապան եղիցի. ամէն:

Ժ. Աղօթք ճանապարհորդաց: ... Կենդանամայէլ, կենամայել, Մաթէ, որ էք սպասաւորք Աստուծոյ դուք ճանապարհորդակից լերուք ծառային Ա(ստուծո)յ Խանումին ... ծառային Ա(ստուծո)յ Խանումի օգնական և պահապան եղիցի. ամէն:

ԺԱ. Աղօթք սրբոյն Սարգսի զօրավարին: ... ծառային Ա(ստուծո)յ Խանումին օգնական և պահապան եղիցի. ամէն:

ԺԲ. Մաղթանք զարհուրանաց գիշերոյ. Որդի Ա(ստուծո)յ կենդանոյ ... ծառային Աստուծոյ Խանումին օգնական և պահապան եղիցի. ամէն:

Պաշտօնէութիւն Սրբոց Յակոբեանց Վանուց Ձեռագրատան
Մարտ, 2015

digitised by A.R.A.R.@